Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Յա. Զարոբյանի անվան N 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Առարկա՝ Պատմություն

Թեմա՝ «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը պատմություն առարկայի դասավանդման ընթացքում»

Վերապատրաստող, մենթոր՝ Արմենուհի Մելքոնյան

Ուսուցիչ՝ Նարինե Մկրտչյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն …….3
2. Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնականհաստատությունում…….6
3. Արժեքային համակարգի ձևավորման խնդիրները և կիրառումը Հայոց պատմության դասավանդման ժամանակ ……..9
4. Դասապլան……..…13
5. Եզրակացություն……18
6. Օգտագործված գրականության ցանկ……19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիկանությունը:

Մեր երկրում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում, որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Բոլոր ուսումնական առարկաների մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նշվում են արժեքները՝ դրանց ձևավորումը, որը սովորողը վերցնում է դպրոցից:

Ժամանակակից հասարակությունն գնալով ավելի է կարևորում դպրոցի, մանկավարժի դերը մատաղ սերնդի դաստիարակության, իր երկրի ապագայի կարևորությունը գիտակցելու, հասարակության վաղվա օրվա մեջ նրա ինքնադրսևորման, ինքնահաստատման գործում: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է մեթոդների, ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում:

Կրթության հիմնախնդիրներով զբաղված մասնագետներից պահանջվում է ճշգրիտ որոշել և վերլուծել այն գլոբալ արժեքները, որոնք անհրաժեշտ էին քսանմեկերորդ դարի քաղաքացուն: Փոխվել է ժամանակաշրջանը, փոխվել են նաև արժեքները, փոխվել են արժեքային կողմնորոշումները, նախասիրություններն ու պահանջմունքները:

Յուրաքանչյուր սովորողի մեջ արժանապատվություն և արժեքներ սերմանելու համար ուսուցչից պահանջվում է մեծ ներուժ, իսկ այդ ուժը ձեռք է բերվում նորամուծությունների միջոցով: Որպեսզի «արժեքը» հասու լինի բոլորին, պետք է նախ բացատրել՝ ինչ է «արժեք» եզրույթը: Արժեքը, որը հանդիսանում է փիլիսոփայական եզրույթ: «Աքսիոլոգիա» եզրույթը հունարենից թարգմանաբար նշանակում է ուսմունք արժեքների մասին: Արժեքը բնութագրվում է, որպես «շրջապատող աշխարհի օբյեկտներին հատուկ սոցիալական որակումներ, որոնք բացահայտում են նրանց բացասական և դրական նշանակությունը մարդու և հասարակության համար» :

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավականին լայն իմաստով: Ընդունված է արժեհամակարգը դիտել, որպես մարդու բարոյական, , հոգևոր, իմացական, գեղագիտական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբ, որն անհրաժեշտ է մարդու ներդաշնակ, զարգացման ու բազմակողմանի ձևավորման համար:

Արժեհամակարգի մեջ ներգրավված է անցյալի փորձը, որի ըմբռնումը, յուրացումը սովորողների մեջ ձևավորում է, սեփական ժողովրդի պատմության, հայրենասիրության, մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում:

Արժեքը սովորողին սերմանելու համար հատկապես իր կարևոր տեղն ունի «պատմություն» առարկան: Այն կարողանում է արժևորել և սովորեցնել պատմության մեջ կատարվող ամեն փաստ, երևույթ և քաղել դասեր դրանցից: Բուն նյութին անցնելուց առաջ կթվարկենք և կխոսենք արժեքի, դրա նշանակության և խմբերի մասին: Այս թեմայի մեջ կխոսենք այն մեթոդների մասին, որոնք կնպաստեն արժեքի ձևավորմանը սովորողների մեջ:

Հետազոտության նպատակը:

- Արժևորել և հիմնավորել հայ դպրոցականի ազգային արժեհամակարգի, ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում պատմություն առարկայի դերն ու նշանակությունը , ինչպես նաև պատմությունից դասեր քաղելու անհրաժեշտությունը:
- Բացահայտել սովորողների վերաբերմունքը պատմական իրադարձությունների, ազգային գործիչների, նշանավոր իրադարձությունների վերաբերյալ:
- Ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդներ սովորողների շարժառիթը (մոտիվացիա) բարձրացնելու համար:

- Դասաժամերի, դպրոցական խմբակների շրջանակներում անրադառնալ հայ ազգային հերոսների կերպարներին, իրենց հերոսություններին, սխրանքներին, կատարած շինարարական աշխատանքներին, որպեսզի առավել ոգևորվեն սովորողները և դաստիարակվեն հայրենասիրության ոգով:

Հետազոտության խնդիրները:

1. Մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա:
2. Ներկայացնել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, որը մեր ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի մեջ:

3. Գտնել այս խնդրին առնչվող առավել արդիական գրականություն:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտ է հանդիսանում դասարանը, որտեղ կատարել եմ դասապրոցես:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության կիրառված մեթոդներն են՝դիտարկում, վերլուծություն, թեստավորում և այլն:

Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում

Սերունդների դաստիարակության և կրթության արդյունավետության խնդիրը միշտ եղել է ուսուցիչների, փիլիսոփաների, հոգեբանների ուշադրության կենտրոնում: Շատ փիլիսոփաներ, հատկապես ամերիկացի մանկավարժ և փիլիսոփա Ջոն Դյուին, ով իր աշխատություններով նպաստում էր կրթության առաջադեմ շարժմանը, համոզված էր, որ լավագույն կրթությանը հասնում են կրթության միջոցով. «Ես հավատում եմ ,որ կրթությունը, հետևաբար, ապրելակերպ է և ոչ թե ապագա ապրելու նախապատրաստություն»[5]: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հատկապես «Հայոց պատմություն» առարկայի դերը: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը սովորողների մեջ ձևավորում է , սեփական ժողովրդի պատմության, գիտական նվաճումների, նրա ստեղծած մշակութային արժեքների համար հպարտության զգացում: Ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները սովորողների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Ազգի արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումը դա ազգային արժանապատվություն է, ինքնահարգանքը՝ որպես ազգի ներկայացուցիչ: Մեր երկրում՝ Հայաստանի Հանրապետությունում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Միջնակարգ կրթության պետական չափորոշչում[9], որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ , Հայոց պատմության առարկայական չափորոշչում[8]: Բոլոր ուսումնական առարկաների մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող

գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը : Արժեքային համակարգի կարևորությունը նշված է նաև Եվրոպայի խորհրդի կողմից հրատարակված Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ `ժողովրդավարական մշակույթի համար[7] աշխատության մեջ:

Նոր սերնդի դաստիարակությունն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ հանգամանքներ արդի մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական մշակույթի, հայ ժողովրդի պատմության հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Տարբեր հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ դրանց ազդեցությունը յուրացնելով `սովորողը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Այսպես՝ կրթական տարբեր մակարդակներում սովորողները ունենում են աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր պատկերացումներ, դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Հեռուստատեսությունը, կինոն, թատրոնը, համացանցն ազդում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի կերպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական,դաստիրակչական կամ արժեաքյին և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում ,այլ գիտելիքների ու կարողությունների ,արժեքային որակների,կամքի ,բնավորության ,զգացմունքների,հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Դասընթացի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիրակչական խնդիրներ է լուծում՝

հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, խնդիրներ որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Ուսուցիչն առանձնացնում է ընդհանուր դաստիրակչական խնդիրները, որոնք սովորողների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչն ուսուցման կազմակերպման բազմաթիվ ձևերի միջոցով (էքսկուրսիա, դասղեկական ժամ, անհատական, խմբային, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դառնում աշակերտների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը[2]:

Արժեքային համակարգի ձևավորման խնդիրները և կիրառումը Հայոց պատմության դասավանդման ժամանակ

Շարունակելով իր պատմական ուղին հայ ժողովուրդը հասել է մինչև մեր օրերը և ոտք է դնում արդեն նոր հազարամյակ՝ կրկին նվաճած իր անկախությամբ, իր նորանկախ պետականությամբ և այն պաշտպանելու ու հզորացնելու վճռականությամբ: Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի՝ անկախ տարիքից, ապրելու վայրից՝ լինի սփյուռքում, օտարության մեջ թե հայրենիքում, պարտավոր է ճանաչել իր ազգի պատմությունը: Առանց հայոց պատմության իմացության անհնար է ազգի լիիրավ անդամ կոչվել, որովհետև պատմությունը ոչ միայն ժողովրդի անցած ուղին է, այլև նրա նախնիների կերտած-ստեղծածն է, հայի բնավորությունն ու խառնվածքը: Հայոց պատմության սովորելը և արժևորելն առավելագույնս հնարավորություն է տալիս իրականացնելու մեր ազգային իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը[1]:

Արդի դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ սովորողի մեջ իր ազգին բնորոշ հոգևոր, մշակութային, բարոյական արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Հայ մարդու խնդիրն է պահպանել և փոխանցել արժեքները, որոնք մենք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր ազգային ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմազանության ու բազմերանգության մեջ [4]:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կրթական չափորոշիչների, արժեքային համակարգը նախատեսում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- Պատրաստ լինի ծառայելու հայրենիքին, պաշտպանելու հայրենիքի սահմանները,

- լինի հայրենասեր,
- ունենա ազգային ինքնագիտակցություն,
- կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր սեփական մասնակցության անհրաժեշտությունը,
- արժևորի ներկան և ապագան կերտելու գործում ազգային պատմության դերը,
- գիտակցի հայ ժողովրդի հոգևոր և նյութական արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:
- Սովորողը գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն:

Հայոց պատմություն առարկան նպաստում է իր ինքնությունն ու քաղաքակրթությունների արժեհամակարգերը ճանաչող, նախնիների գործը շարունակող անհատի ձևավորմանը, որն էլ ուղղված կլինի իր գործով նպաստելու հայ և համաշխարհային հասարակության զարգացմանն ու վերափոխմանը՝ այն սկսելով իրենից, իր բնական ու սոցիալական միջավայրից: Պատմության դասավանդման հիմնական նպատակներից մեկը, բացի սովորողներին պատմական երևույթներին ծանոթացնելն է նաև սովորողի հոգևոր ու մտավոր զարգացման, անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որին հասնելու համար անհրաժեշտ է սովորողներին ծանոթացնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, պատմական, ազգային հերոսների օրինակով նրանց մեջ ձևավորել բարոյական արժեքներ՝ բարություն, ընկերասիրություն, ազնվություն, մարդասիրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ: Սովորողները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ, յուրացնելով նրանց վարքի ձևերը՝ հագուստը, կենցաղը ապրելակերպը, կյանքի ոճը և այլն:

Արժեքների ամենաբարձր գագաթին գտնվում է ամենանվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունը: Մեծ մարտահրավերներ են նետված հայոց պետականությանը, որն էլ հրատապ է դարձնում հայրենիքի ապագա պաշտպանների

պատրաստման խնդիրը: Իզուր չէ, որ պետական մակարդակով է խրախուսվում երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Դրանում մեծ դեր ունեն հայ ազգային հերոսների կերպարների հանրահռչակման և այդ ոգով սովորողներին կրթելու նշանակությունը: Հայ ժողովուրդն իր պատմության ողջ ընթացքում հերոսների պակաս չի ունեցել, որոնց շնորհիվ դիմացել է հազարամյակների դաժան փորձություններին: Այդ հերոսների օրինակով մենք կրթում և դաստիարակում ենք մեր սերունդներին , որոնք իրենց իդեալն են դարձրել այս կամ այն նվիրյալին: Հայոց ազատագրական պայքարի դրվագները հայության ինքնահաստատման և դաժան գոյապայքարի վկայություններն են, որոնք ոգևորում են սերունդներին՝ սովորեցնելով անցյալի իրադարձությունների հիման վրա, կատարել ճշմարիտ եզրահանգումներ և քաղել անցյալից դասեր: Յուրաքանչյուր հայոց պատմության դասին նախապատրաստվելիս կարևորվում են թեմայի բոլոր բաղադրիչ մասերը, որոնք նվիրված են հայ նշանավոր գործիչներին, ազատամարտիկներին և՛ ոգեշնչում, և՛ խիզախ դարձնում, և՛ հայրենասիրությամբ են վարակում սվորողներին : Դա առավել նպատակային և արժեքավոր է դառնում ազգային-ազատագրական պայքարի թեմաներն ուսումնասիրելիս: Փորձը ցույց է տալիս, որ սովորողները մեծ հետաքրքրությամբ են ունկնդրում հատկապես ազատագրական պայքարի նվիրյալների կյանքի ու գործունեույթան մասին պատմող պատմական դրվագները:

Ժամանակակից դասին ներկայացվող կարևոր պահանջներից մեկն է ուսուցման մեթոդների ընտրությունը՝ նորագույնի և ավանդականի զուգակցմամբ: Պատմության դասաժամին օգտագործվող արդյունավետ մեթոդներից են «Համառոտ դասախոսությունը», «Մտքերի քարտեզագրում», «Մտագրոհը», «Վենի դիագրամը» , «Տ-ա ձև» աղյուսակը, «Մուտքի և ելքի քարտերը» և այլն: Համագործակցային ուսուցման ձևը համարվում է արդյունավետ ձև և նոր ժամանակների գլխավոր պահանջ: Այն շատ է կարևորվում ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Խմբի անդամների համագործակցված աշխատանքը հնարավորություն է տալիս կարողությունների և երևակայության , հմտությունների տարբեր մակարդակ ունեցող սովորողներին միավորել ուժերը, ջանքեր ներդնել նպատակին հասնելու գործում: Այս մեթոդը դասապրոցեսն ավելի բազմազան, հետաքրքիր է դարձնում, բարձրացնում սովորողների ինքնագնահատականը, խթանում շարժառիթը (մոտիվացիան): Ելնելով

ընդհանուր հետազոտության մեջ առաջադրված խնդիրներից նպատակային է կիրառել հետևյալ մեթոդները [6].

- ✓ Քարտեզային քննարկում: Քարտեզները հրաշալի միջոց են աշխարհագրական գիտելիքը պատմության արդյունավետ մաս դարձնելու, պատմության աշխարհագրական ընկալումը ձևակերպելու համար:
- ✓ Պատկերի ակնթարթայիմն դիտում: Սրանք վերլուծական հարուստ տեղեկություններ են պարունակում:
- ✓ Ճիշտ պատասխանի գուշակում: Պատմության ուսուցումը կարող եք հարստացնել դասին զուգահեռ խաղերով՝ սովորողներին օգնելով պարբերաբար անրադառնալ արդեն անցած նյութի փաստական հատվածին[3]:
- ✓ Գիտելիքների բուրգ: Բուրգի ամեն մի հատվածում գրվում է նախադասություններ, որի միջոցով արտահայտում է տվյալ թեմային վերաբերող հետաքրքիր փաստեր, օգտակա տեղեկություններ, դրական հույզեր և ինքնատիպ առաջադրանքներ:
- ✓ Ելքի քարտեր: Ելքի քարտերի միջոցով հավաքագրվում են սովորողների պատասխանները, հիմնվելով պատասխանների վրա ուսուցիչը կառուցում է հաջորդ դասը:

ԴԱՍԱՊԼԱՆ

Օգտագործելով դասավանդման տարբեր մեթոդներ՝ պատմության ուսուցիչը հնարավորություն է ունենում դասապրոցեսի ընթացքում իրականացնել ուսուցիչ – աշակերտ, աշակերտ–աշակերտ փոխհարաբերությունները:



Ստորև ներկայացված է դասապլան, որտեղ փորձել եմ ներկայացնել այն թեման, որն իրականացրել և իրականացմելու եմ նույն մեթոդներով, որի նպատակն է հայրենասիրություն, ազգասիրություն դաստիարակելը:

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկա	Հայոց պատմություն
Դասարան	7-րդ
Թեմա	Վարդանանց պատերազմը
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, տետր, քարտեզ, նկարներ, սահիկաշար
Մեթոդներ	Մտքերի քարտեզագրում, հարց ու պատասխան, կարճ դասախոսություն
Հիմնական հասկացություններ	Ավարայրի ճակատամարտ, հաղթանակ, Ազատագրված հայրենիք
Դասի նպատակը	• Ձևավորել գիտելիք՝ պատերազմի պատճառների վերաբերյալ • Տալ գաղափար հերոս հայորդիների վերաբերյալ, • Ցույց տալ հայրենիքն ազատագրելու, պաշտպանելու անհրաժեշտության նշանակությունը • Զարգացնել ստեղծագործական կյարողություն՝ բնութագրելու հայ հերոսի, սպարապետի կերպարը սովորողի պատկերացմամաբ։
	Աշակերտը կկարողանա՝

Վերջնարդյունքները	• Ներկայացնել պատերազմի պատճառները • Թվել Վարդանանց ազատագրական պատերազմի հերոսներին • Ցույց տալ քարտեզի վրա տարածքները • Ներկայացնել Վարդանանց պատերազմի պատմական նշանակությունը • Գնահատել Վարդանանց պատերազմի հերոսների սխրանքը:

ղություններ (ժամ, տևողություն)	**Պլանավորված ՈւԳ Ռազմավարություններ**	**Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)**
Կազմակերպչական մաս (5 րոպե)	Հաշվառում, տնային առաջադրանքների ստուգում	
Դասի ընթացքը, Նախորդ նյութի հարցում (5րոպե)	Ուսուցիչը հարցերի միջոցով ամփոփում է անցած դասը (Պարսից գերիշխանության սաստկացումը)	**1.** Ո՞վ էր Հազկերտը և ինչպե՞ս էր փորձում թուլացնել Հայաստանի ռազմական

		հզորությունը
Խթանում (10 րոպե)	Դասը կսկսվի մտքերի քարտեզագրում մեթոդով (առանցքային թեման՝ Վարդանանց պատերազմ) սեվորողները կպատասխանեն ինչ դեպքերով սկսվեց հայերի ապստամբությունը:	**2.** Հազկերտի հրովարտակը հայերից ի՞նչ էր պահանջում
Իմաստի ընկալում (10 րոպե)	Կարճ-դասախոսության միջոցով ներկայացնել դասի առանցքային հարցերը , ապա դասարանը բաժանել երեք խմբի և տալ հանձնարարություններ: I խումբ- կներկայացնի Պարսից գերիշխանության սաստկացումը ենթաթեման: II խումբ –կներկայացնի Վարդանանց ապստամբության ծավալումը : III խումբ –կներկայացնի Ավարայրի ճակատամարտը և դրա նշանակությունը: Հետո խմբերից յուրաքանչյուրը քարտեզի վրա կնշի ազատագրված տարածքները, դուրս կգրի ազատագրական պայքարի հերոսների անունները (այդ թվում հոգևորականների) : Արժևորել Եզիշե պատմիչի հետևյալ խոսքերը. «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահություն»:	**3.** Ե՞րբ հրավրվեց Արտաշատի ժողովը **4.** Նկարագրեք Ավարայրի ճակատամարտը և ի՞նչ նշանաբանով էր մղվում հերոսամարտը 5. Գեղարվեստական ի՞նչ ստեղծագործությունն երում է պատկերված Վարդանանց պատերազմը

Կշռադատում (10 րոպե)	Խմբային աշխատանքը ավարտելուց հետո ուսուցիչը հարցերի միջոցով ամփոփում է դասը: Սովորողները ընդհանրացնում են իրենց գիտելիքները և հանգում այն եզրահանգման,որ Ավարայրի ճակատամարտը ոգեշնչման և հայրենիքը կյանքի գնով պաշտպանելու վեհ գաղափարի մարմնավորման վառ օրինակ է ներկա և ապագա սերունդների համար:	
Գնահատում	Միավորային	
Տնային աշխատանք (5 րոպե)	Հավաքել տեղեկություններ Վարդանաց պատերազմի հերոսներից որևիցե մեկի մասին:	

Այս թեման յուրացնելու արդյունքում հասել եմ իմ նպատակին՝ այն է հայրենասիրական և ազգային զգացմունքների ամրապնդում, Հայոց եկեղեցու և հայ հոգևորականության կատարած նշանակալի դերի արժևորում: Այս թեմայի դասավանդման ընթացքում միջառարկայական կապ եմ հաստատել 7-րդ դասարանի «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով հետազոտական աշխատանքս եկա այն եզրահանգման, որ յուրաքանչյուր ազգի անկախության ու կայունության կարևորագույն երաշխիքն է ճիշտ ազգային արժեքային համակարգի ստեղծումը և պահպանումը:

Հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա , որը կարևոր նշանակություն ունի հայ ժողովրդի և Հայաստանի համար: Խոսքը վերաբերում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին «Հայոց պատմություն» առարկայի դասերին:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունն ու Հայաստանի Հանրապետության քաղաքացին ապրում են դժվարագույն ժամանակներ, երբ վտանգված է հայ ժողովրդի ինքնության և հայոց պետականության գոյությունը: Հիմա և՛ նոր Սարդարապատի, և՛ նոր Ավարայրի կարիքը կա, անհրաժեշտ է համախմբվել՝ հզոր բռունց դառնալ, որպեսզի կարողանանք հաղթահարել մեր պետության գլխին կախված հերթական վտանգը:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է գիտակցի, որպես հայ, ո՞րն է իր անելիքն. իր անելիքն՝ ամենակարևորը հայրենիք սիրելն է իրական սիրով: Հենց այս է պատճառը, որ կրթության գլխավոր իմաստը և հենքը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Արժեքային համակարգը կարևորում է ,որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝ լինի հայրենասեր, անձնվիրաբար ծառայել հայրենիքին, կարևորել ազգային-պետական մտածողություն, ունենալ գործելակերպ և դրսևորի դրանց հասնելու կամք ու ձգտում: Պահպանի ազգային նկարագիրը, ունենա արդարության, ազնվության, լավատեսության և պատասխանատվության զգացում, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը: գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում հայոց պատմության դերը, գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:

«Հայոց պատմություն» առարկայի ուսումնասիրման ընթացքում ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովուրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացի և անձ : Եվ այս պատճառով արժեաքային համակարգի ձևավորումը արդի դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Աշակերտների համար հնարավորություններ ստեղծվեն, որպեսզի նրանք ավելի հաճախակի գնան արշավներ դեպի պատմամշակութային վայրեր, հնավայրեր՝ առավել լավ ճանաչելու հայրենիքի ամեն անկյունը:
- Դասագրքերում ավելացնել թեմաներ, պատմական դրվագներ, ազգային արժեքների մասին: Ավելացնել այն թեմաներիը, որոնք ոչ թե սերտում են ենթադրում, այլ մտածելու տեղիք են տալիս և դատողություններ անելու են դրդում:
- Արժեհամակարգին վերաբերող թեմաները շատացնել դասագրքերում, որն էլ կնպաստի մեր ազգային և համազգային հիմնարար արժեքներին: Որքան սովորողներն շատ ծանոթանան մեր ազգային արժեքներին, ավելի շատ կգնահատեն, կշենացնեն, կպահպանեն իրենց ժառանգված հայրենիքը՝ Հայաստանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա.Ղուկասյան , Հայոց պատմություն ,Ուսուցչի ձեռնարկ ,Երևան ,2013
2. Բաբանսկի Յու . -Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում:
3. Գիրք պատմության ուսուցման,ինչու՞,ինչպե՞ս, Պարադիգմա կրթական հիմնադրամ , 2020,էջ 39,49,69,73:
4. Գևորգյան Ա. , Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65:
5. Իմ մանկավարժական քույր-1897թ.:
6. Լալայան Կ. Պատմության դասերի պլանավորման նմուշ -օրինակներ, Երևան 2009թ. էջ 6-8:
7. Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ Ժողովրդավարական մշակույթի համար. Եվրոպայի խորհուրդ, հատոր 2:
8. Հայոց պատմության առարկայական չափորոշիչ https://escs.am/am/news/862:
9. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ https://www.arlis.am/documentview.aspx?docid=42195: